

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ք.Երևան

10.04.09

«Ալմաստ» բաց բաժնետիրական ընկերության վերստուգող Ա. Հարությունյանս, մասնակցությամբ ընկերության տնօրեն Ս.Սկրտչյանի և գլխավոր հաշվապահ Դ.Սայամյանի ստուգման ենթարկեցի ընկերության 2008 թվականի ֆինանսատնտեսական գործունեությունը գործունեությունը:

Ընկերությունը հաշվետու տարին եզրափակել է ներքոհիշյալ ֆինանսական ցուցանիշներով՝

Եկամուտների և ծախսերի հոդվածները	փաստ 2007		եկամուտներ		ծախսեր	
	եկամուտ	ծախս	պլան	փաստացի	պլան	փաստացի
արտադրական հասույթ	117.101			114.909		
նյութերի վաճառքից	12.249	13.478		12.851		7.152
վարձավճարներից	4.452			5.372		
փոխարժեքի տարբերություն	42.712	247		3.875		5.977
տույժեր և տուգանքներ		1.563				1.579
նյութերի դուրս գրում		2.194				584
աշխատավարձ		49.635				51.589
սոց. վճարներ		10.201				9.780
նյութական ծախսեր		74.260				36.185
մաշվածություն		16.950				21.200
վնասի հատուցում		1.135				1.356
գործուղում		540				150
կապի ծախս		1.915				2.695
հոսանք, ջուր և գազ		9.697				7.076
բանկային ծառայություն		130				133
չհատուցվող հարկեր		1.957				3.096
արհմիության հատկացում		500				880
ներկայացուցչական ծախս		1.300				471
իրացման ծախս		3.318				2.250
գրասենյակային և այլ ծախսեր						1.254
տրանսպորտի վերանորոգում						313
դեպոզիտարանի և բորսայի ծախս.						313
այլ ծախսեր		3.273				
<u>ընդամենը եկամուտ և ծախս</u>	<u>176.514</u>	<u>192.293</u>		<u>137.007</u>		<u>154.033</u>
ֆինանսական արդյունք		(15.779)				(17.026)
շահութահարկ						1.602
հաշվեկշռային վնաս						(18.628)

Ընկերության հաշվետու տարվա ընդհանուր եկամուտը կազմել է 137.007,0 հ. դրամ, այդ թվում՝ արտադրական գործունեությունից՝ 114.909,0 հ. դրամ, նյութերի վաճառքից՝ 12.851,0 հ. դրամ, վարձավճարներից՝ 5.372,0 հ. դրամ և փոխարժեքի տարբերությունից՝ 3.875,0 հ. դրամ: Անհրաժեշտ է նշել, որ արտադրական գործունեությունից ստացած եկամուտը նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի համեմատ նվազել է 2.192,0 հ. դրամով, իսկ վարձավճարներից ստացած եկամուտը աճել է 920,0 հ. դրամով:

Հաշվետու տարվա ընդհանուր ծախսերը կազմել են 154.033,0 հ. դրամ: Այսպիսով, ընկերությունը 2008թ. ֆինանսական արդյունքներով ստացել է 17.026,0 հ. դրամի վնաս, որից 17.300,0 հ. դրամը

հիմնական միջոցների վերագնահատումից առաջացած մաշվածությունն է: Հաշվի առնելով վերագնահատումից առաջացած մաշվածության գումարը և արտաթույթի փոխարժեքի տարբերությունից գոյացած 2.102,0 հ. դրամ վնասը, որոնք կապված չեն արտադրական գործունեության հետ, ընկերությունը հաշվետու տարում արտադրական գործունեությունից ստացել է 2376,0 հ. դրամ շահույթ:

Անհրաժեշտ է նշել, որ տարեկան ծախսերի 25.027,0 հ. դրամը համարվում են համախառն եկամուտից չմվազեցվող ծախսեր, ուստի ըստ շահութահարկի հաշվարկի տարեկան հարկվող շահույթը կազմել է 8.008,0 հ. դրամ, որից հաշվարկվել է 1.602,0 հ. դրամ շահութահարկ: Նշված շահութահարկի գումարը գումարվում է տարեկան ֆինանսական արդյունքին և հաշվեկշռային վնասը առ 01.01.09թ. դրությամբ կազմում է 18.628,0 հ. դրամ:

Հաշվետու տարվա հարկային փաստաթղթերով չհիմնավորված ծախսերը կազմել են 6.878,7 հ. դրամ, որի դիմաց հաշվարկվել և բյուջե է փոխանցվել 206,4 հ. դրամ լրացուցիչ եկամտահարկ և 1.376,0 հ. դրամ լրացուցիչ շահութահարկ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2009թ. հունվարի 1-ից հարկային փաստաթղթերով չհիմնավորված ծախսերի դիմաց եկամտահարկի դրույքը 3%-ի փոխարեն հաստատվել է 11%, ուստի անհիմն ծախսերից խուսափելու համար անհրաժեշտ է կրճատել հարկային փաստաթղթերով չհիմնավորված ծախսերի ձևակերպումը:

Կապի և հեռահաղորդակցության ծախսերը ուսումնասիրելիս պարզվել է, որ ընկերությունը իր ծախսերով ձևակերպում է նաև ընկերության 7 աշխատողների սեփականությունը հանդիսացող բջջային հեռախոսների խոսելավարձը, հաստատված որոշակի լիմիտների սահմաններում: Նշված հեռախոսների տարեկան խոսելավարձը կազմել է մոտ 1.000,0 հ. դրամ, բացի դրանից 1 հատ բջջային քարտ ընկերության կողմից չի օգտագործվում, սակայն յուրաքանչյուր ամիս վճարվում է 4,0 հ. դրամ արճենտային վճար:

Ընկերությունը 2008թ. հաշվետու տարում ունեցել է 4.122,0 հ. դրամի հիմնական միջոցների աճ, այդ թվում՝ 3.902,0 հ. դրամը ծախսվել է ադմինիստրատիվ շենքի սանհանգույցների և պատուհանների վերանորոգման համար և ավելացվել է այդ շենքի արժեքին որպես կապիտալացված ծախս, իսկ 220,0 հ. դրամի գնվել է 1 հատ բջջային հեռախոս գլխավոր էներգետիկ Կարապետյանի միջոցով և մուտքագրվել է որպես հիմնական միջոց: Ուսումնասիրելով գնման ակտերով ձևակերպված և մուտքագրված նյութական արժեքների գնման գները վերաստուգող հանձնաժողովը եկել է այն եզրակացության, որ որոշ ձևակերպված շուկայական գները չեն համապատասխանում իրականությանը: Այսպես, 04.04.2008թ. համար 00-0053 դրամարկղային ելքի օրդերով գնվել է 10 հատ ավել, 1 հատը 1000 դրամ արժեքով, այն ինչ նշված ավելի շուկայական գինը տատանվում է 500-700 դրամի սահմաններում: Հատկանշական է այն հանգամանքը, որ այդ նույն տեսակի ավելը գնվել է 18.04.2008թ. 1 հատը 500 դրամ արժեքով:

Ստուգմամբ հայտնաբերվել է ժամկետանց և անհուսալի դեբիտորական պարտքեր, որոնք առաջացել են սկսած 2001թ-ից մինչև 2005թ.: Ստորև բերվում է անհուսալի դեբիտորական պարտքերի ցուցակը.

1	Դավթյան Սրբուհի	աշխատավարձի պարտք	2001թ.	88.153 դրամ
2	Բզնունի Գուրգեն	աշխատավարձի պարտք	2002թ.	234.663 դրամ
3	Ավագյան Անդրեյ	առեհաշիվ գումար	2002թ.	490.000 դրամ
4	Հակոբյան Անդրանիկ	աշխատավարձի պարտք	2003թ.	132.456 դրամ
5	Ալավերդյան Նարինման	աշխատավարձի պարտք	2003թ.	160.486 դրամ
6	Մարգարյան Արտյոմ	աշխատավարձի պարտք	2003թ.	28.000 դրամ
7	Ասրյան Արմեն	աշխատավարձի պարտք	2003թ.	23.259 դրամ
8	Պողոսյան Սոս	աշխատավարձի պարտք	2004թ.	160.200 դրամ
9	Քեչիշյան Սիիրան	գործիքների արժեք	2004թ.	151.495 դրամ
10	«Դիամ» ՍՊԸ	գործիքների արժեք	2004թ.	308.250 դրամ
11	Խաչատրյան Խաչիկ	գործիքների արժեք	2005թ.	819.000 դրամ
12	Միրզոյան Սուրիկ	ջրաչափերի արժեք	2005թ.	732.000 դրամ
13	«Կազար» ՍՊԸ	խաղատան գործիքների արժեք	2005թ.	145.811 դրամ
14	«Լորի» ՍՊԸ	գործիքների արժեք	2005թ.	252.504 դրամ
15	«Էիս» ՍՊԸ	ժուրնալի արժեք	2005թ.	159.100 դրամ
16	«Շեն» կոնցեռն	շինանյութի արժեք	2005թ.	108.000 դրամ
17	«Վնիմաշ» ՍՊԸ	բլանկների արժեք	2005թ.	65.080 դրամ
18	Սարգսյան Լաուրա, Փիլիպոսյան Հասմիկ	նյութեր	2005թ.	94.000 դրամ
19	Արտիկ Ստեկլոնաշ	նյութերի արժեք	2005թ.	334.000 դրամ
20	Հովսեփյան Ռոբերտ	նյութեր	2005թ.	24.100 դրամ

21	RHSIS ՍՊԸ	յուղի արժեք	2005թ.	106.650 դրամ
22	ԱԶ Ա.Պետրոսյան	նյութեր	2005թ.	145.000 դրամ
23	Շինմոնտաժ Հախվերդյան	նյութեր	2005թ.	71.992 դրամ
	Ընդամենը			5.000.199 դր.

Վերոհիշյալ ժամկետանց դեբիտորական պարտքերի վերականգնման համար ժամանակին կոնկրետ միջոցներ չձեռնարկելու պատճառով դրանք այժմ դարձել են անհուսալի ակտիվներ, որոնց վերականգնման համար անհրաժեշտ է ձեռնարկել կոնկրետ միջոցներ դատական ատյանների միջամտությամբ:

Ընկերության հաշվեկշռում սեփականաշնորհման օրվանից մինչև այժմ որպես ակտիվներ արտացոլված են 1.823,0 հ. դրամ արժողությամբ մանկապարտեզի շենք, որը գտնում է Էջմիածնի շրջանի Այգեշատ գյուղում: Նշված մանկապարտեզը մինչև հիմա սեփականաշնորհված չէ և ընկերության հաշվեկշռում մնում է, որպես ոչ ռեալ ակտիվներ:

Ընկերության հաշվեկշռում արտացոլված են 20 հատ ավտոմեքենա 3.200,0 հ. դրամ մնացորդային արժեքով, որից 11 հատը գնտվում են տեխնիկապես սարքին վիճակում և ներկայումս աշխատում են, իսկ 9 հատ ավտոմեքենան ունեն 20 տարուց ավելի մաշվածության ժամկետ, գտնվում են տեխնիկապես անսարք վիճակում, հետագա վերանորոգումը վնասաբեր է, այդ մեքենաները անհրաժեշտ է դուրս գրել և վաճառել: Բացի դրանից նշված անսարք և չաշխատող մեքենաների համար վճարվում է գույքահարկ տարեկան 91,0 հ. դրամ:

Ստուգման ընթացքում հանձնաժողովի կողմից կատարվել է գույքագրում ընկերության 1-ին հարկում գտնվող ֆիրմային խանութում: Գույքագրմամբ հայտնաբերվել է ավելցուկ 297.258 դրամի, սակայն ըստ նյութական պատասխանատու անձ՝ Սվետլանա Վարդանյանի հայտարարության, խանութում վաճառքի է հանված նաև «Արաքս» ԲԲԸ-ին պատկանող ընկերությանը ի պահ հանձնված ավմաստի գործիքներ 325,5 հ. դրամ արժեքով, որը ձևակերպված չէր հաշիվ-ֆակտուրայով, ուստի հաշվի առնելով «Արաքս» ԲԲԸ-ին պատկանող նյութական արժեքի մնացորդը խանութում գույքագրման արդյունքներով հայտնաբերվել է 28,242 դրամ պակասորդ, որը ենթակա է վերականգնման նյութական պատասխանատու անձ Սվետլանա Վարդանյանից: Կցվում է խանութի գույքագրման համար կազմված ակտը:

Ստուգման օրը, այսինքն 2009թ. ապրիլի 6-ին ընկերության դրամարկղում կար 1.790,000 կանխիկ դրամ, որի մնացորդը համապատասխանում է հաշվապահական հաշվառման տվյալներին:

վերստուգող



Ա.Հարությունյան